# ՆՈՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ ԵՄ ՄԱՂԹՈՒՄ

**Ի. ՎԻՆՈԳՐԱԴՈՎ**

ակադեմիկոս, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ

*Ինձ՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամիս, մեծ հաճույք է պատճառում գիտական մտքի այդ խոշոր օջախին ողջունել նրա հիմնադրման 30-ամյակի առթիվ։ Հայաստանի ակադեմիան արժանի տեղ է գրավում սովետական գիտության մեջ և հաջողությամբ է լուծում ֆունդամենտալ ու կիրառական գիտությունների կարևոր ու լուրջ խնդիրները։*

*Ուզում եմ հատկապես շնորհավորել Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին, որի ծառայությունները ձեր հանրապետության գիտության զարգացման գործում դժվար է գերագնահատել։ Համբարձումյանին ճանաչելով դեռևս Լենինգրադում նրա ուսումնառության տարիներից, ես ի սրտե ուրախանում եմ, որ այսօր նա ճանաչված է ոչ միայն որպես մեր ժամանակների ականավոր գիտնականներից մեկը, այլև որպես գիտության փորձված, հեռատես կազմակերպիչ։*

*Սովետական Հայաստանի գիտնականների մեծ համբաշխ կոլեկտիվին մաղթում եմ հետագա բեղմնավոր գիտական աշխատանք, նոր բարձունքների ու բնագծերի նվաճում։*